



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը,

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի շրջանավարտների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 17.09.2014թ. թիվ 26/9-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի 1.5 և 2.17 կետերի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

- 1. Հաստատել (սահմանել) 2016 թվականի աշնան որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:**
- 2. Սույն որոշմամբ սահմանված ժամանակացույցը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:**

Նախագահ՝

Արա Զոհրաբյան

Որոշում N 7/1-Լ

ք. Երևան

16 սեպտեմբերի 2016թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
 Հայաստանի Հանրապետության
 փաստաբանների պալատի
 որակավորման հանձնաժողովի
 16.09.2016թ. N 7/1-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահ՝
 Արա Զոհրաբյան

**2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

1. 2016 թվականի աշնան որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) ունկնդիրների (շրջանավարտների) կողմից առձեռն կարող են տրվել մինչև **2016թ. սեպտեմբերի 30-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):
2. Որակավորման քննություններն անցկացվելու են հետևյալ հասցեում՝ **ք.Երևան, Զաքիյան 2, 3-րդ հարկ** (Փաստաբանական դպրոցի գտնվելու վայր):
3. Սահմանված ժամկետում դիմում ներկայացրած ունկնդիրները որակավորման քննություններին մասնակցելու համար պետք է նախապես գրանցվեն ստորև նշված քննությունների օրերին՝ ժամը **09¹⁵-ից** մինչև **09⁴⁵** ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
4. Որակավորման քննություններն անցկացվելու են հետևյալ օրերին՝

Քրեական ուղղվածություն			
N	Մոդուլ	Առաջադրանք	ամսաթիվը և ժամը
1.	Դեռնթոլոգիա	4 խնդիրներ	11 հոկտեմբեր 2016թ. ժամը 10.00
2.	Քրեական	միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմել	18 հոկտեմբեր 2016թ. ժամը 10.00
3.	Քրեական	դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	25 հոկտեմբեր 2016թ. ժամը 10.00

Քաղաքացիական ուղղվածություն			
N	Մոդուլ	Առաջադրանք	ամսաթիվը և ժամը
1.	Դեռնթոլոգիա	4 խնդիրներ	11 հոկտեմբեր 2016թ. ժամը 10.00
2.	Քաղաքացիական	հայցադիմում կազմել	18 հոկտեմբեր 2016թ. ժամը 10.00
3.	Քաղաքացիական	վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	25 հոկտեմբեր 2016թ. ժամը 10.00